2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) զբաղվածության տարածքային կենտրոններում խորհրդատվություն է ստացել 225,1 հազար անձ, որից հաշվառված է որպես աշխատանք փնտրող 72.6 հազարը (որից 51.2 հազարը կանայք են, 16.9 հազարը՝ երիտասարդ)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 12,2%-ով (64.7 հազար մարդ): Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 91.4 %-ը, կամ 65.9 հազար մարդ. այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 17.9%-ով (55.9 հազ. մարդ): Շարունակվում է բարձր մնալ գործազուրկ կանանց թիվը, որը կազմում է գործազուրկների թվի 71.8 %-ը, կամ 47.3 հազար մարդ: Երիտասարդների թվաքանակը կազմում է գործազուրկների 23.7 %-ը կամ 15.6 հազար մարդ, իսկ հաշմանդամություն ունեցող անձիք 3,2% կամ 2.1 հազար մարդ: Գործազուրկների թվաքանակում առաջին անգամ աշխատանք փնտրողների թիվը կազմում է 42.8% (28.2 հազ. մարդ), որից երիտասարդները կազմում են 12.6 հազար, կամ 44.7%-ը:

Գործազուրկների թվաքանակում բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների թիվը կազմում է 14,3%, միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 20.4%, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 6.2%, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 50.3 %, հատուկ ընդհանուր, հիմնական ընդհանուր և տարրական կրթություն ունեցողները՝ 8,8 %:

Մասնագիտական կրթություն ունեցողների մեջ մեծ թիվ են կազմում ճարտարագետները (տարբեր), մանկավարժները, բուժքույրերը, տեխնիկները (տարբեր), ֆինանսիստները, տնտեսագետները և այլ մասնագիտացում ունեցողները:

Ըստ տարիքային ցեղի գործազուրկների թվում 16-29 տարեկանները կազմում են 23,7%, 30-44 տարեկանները՝ 38,9%, 45-54 տարեկանները՝ 21,4%, 55-ից բարձր տարիքի անձինք՝ 16,0%:

Գործազուրկների թվաքանակում աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվաքանակը կազմում է 55,2 հազ. անձ, կամ 83,8%-ը:

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում ընդգրկվել է 10406 անձ՝ աշխատանք փնտրողների 14.3%-ը: Զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվել են 7296 աշխատանք փնտրող անձ (աշխատանք փնտրողների 10.1%-ը)՝ նախատեսված 7121-ի փոխարեն: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքի է տեղավորվել 11495 անձ աշխատանք փնտրողների 15.8%-ը: Աշխատանքի տեղավորվածների 28.9%-ը երիտասարդներ են, այն կազմում է հաշվառված երիտասարդների 18.6%-ը, նախատեսված 18.0%-ի փոխարեն, 2.8%-ը՝ հաշմանդամներ, որը կազմում է հաշվառված հաշմանդամների 14.2%-ը:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանցից աշխատանքի է տեղավորվել 63,3%-ը:

Տարեկազբից գործազուրկության նպաստ ստանալու իրավունք են ունեցել ամսական միջին թվով 3336 գործազուրկ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալությունը տարվա ընթացքում համագործակցել է շուրջ 22000 գործատուի հետ, նրանցից 7265-ը ներկայացրել է 22101 թափուր աշխատատեղեր:

Աշխատաշուկայում պահանջարկված են հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող բժիշկները (մարզերում), տնտեսագետները, ծրագրավորողները, ճարտարագետները, հաշվապահները, դասավանդողները, դաստիարակները, մենեջերները, գործակալները (տարբեր), միջին մասնագիտական բուժքույրերը, դիզայներները, վաճառողները, մատուցողները, խոհարարները, հացթուխները, վարսահարդարները, սարքավորումների և համակարգչային օպերատորները և նախնական՝ ավտովերանորոգողները, էլեկտրիկները, որմնադիրները, կարողները, վարորդները, կռշկագործները, կռունկավարները, փականագործները, խառատները, ատաղձագործները, եռակցողները և բանվորական այլ մասնագիտություններ ունեցողները:

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում>> ծրագրում ընդգրկվել է ամսական միջին թվով 235 գործազուրկ:

<<Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում>> ծրագրում ընդգրկվել է 1591 անձ, որից 121-ը հաշմանդամություն ունեցող:

2014թ. ընթացքում, էլեկտրոնային աշխատաշուկայի պահանջարկից, 72 մասնագիտություններով կազմակերպվել է մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ հաշվապահների, մենեջերների, գործակալների (տարբեր), գանձապահների, դիզայներների (տարբեր), սպասարկման ոլորտի, մշակող արդյունաբերության, ապարատավարի, շինարարության, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների, փականագործների (տարբեր) և այլ ոլորտների մասնագիտությունների գծով:

<<Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում>> ծրագրով այլ բնակավայր աշխատանքի է գործուղվել 37 անձ՝ բժիշկներ (նեղ մասնագիտացումներով), մանկավարժներ (տարբեր), պանրագործ, խառատ, հրուշակագործ, մատուցող, խոհարար, դիմահարդար, մենեջեր, մեխանիկ, ավտոփականագործ և այլն:

<<Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում>> ծրագիրն իրականացվում է երիտասարդների համար: Ծրագրում ընդգրկվել է 349 երիտասարդ գործազուրկ:

<<Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում>> ծրագրով իրականացվել է 11 տոնավաճառ՝ Երևանում, Աբովյանում, Մայիսականում, Գյումրիում, Աշտարակում, Գավառում, Նոյեմբերյանում, Արմավիրում, Գիլիջանում, Մասիսում և Կապանում, որին մասնակցել է 339 գործատու, 7466 աշխատանք փնտրող, գործատուների կողմից ներկայացվել է 1272 առկա և սպասվելիք 449 աշխատատեղ: Ծրագրի արդյունքում աշխատանքի է տեղավորվել 473 աշխատանք փնտրող անձ:

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում>> ծրագրում ընդգրկվել է 350 անմրցունակ անձ, որից հաշմանդամություն ունեցող 30 անձի համար աշխատատեղ է հարմարեցվել:

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում>> ծրագրով 38 կենտրոնից ներկայացվել է 123 ծրագրի հայտ-առաջարկ, ընդ որում ուսուցման մեջ ընդգրկվել է 73 շահառու, որից 57-ը՝ ֆինանսավորվել է:

Ծրագրով ֆինանսավորվել են հիմնականում սպասարկման, մշակող արդյունաբերության, զբոսաշրջության և առողջապահության ոլորտներում ներդրված ծրագրերը:

<<Մեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում>> ծրագրով 10 մարզերի 274 համայնքում կնքվել է 2583 պայմանագիր: Ծրագրում ընդգրկվել է 3679 անձ, որից 257-ը՝ հաշմանդամություն ունեցող:

<<Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում>> ծրագրով կնքվել է 4 հուշագիր: Արդյունքում 2 անմրցունակ անձ տեղավորվել է աշխատանքի:

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում>> ծրագրում ընդգրկվել է 1000 անձ:

Միջազգային համագործակցություն

2014թ. միջազգային ծրագրերի շրջանակներում գործակալությունը համագործակցել է հետևյալ կազմակերպությունների հետ.

ԱՄՆ ՄՉԳ/USAID (Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալություն), ԱՄԿ/ILO (Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն), ՄԱԿ/UNO (Միացյալ Ազգերի Կազմակերպություն), ՄՄԿ/IOM (Միգրացիայի Միջազգային Կազմակերպություն), DVV-international (Գերմանիայի Ժողովրդական Բարձրագույն Դպրոցների Միություն), ԳՄՀՀ/GIZ (Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն), People in Need (Կարիքավոր մարդիկ), ՕԲԻ/Ֆրանսիական ներգաղթի և ինտեգրման գրասենյակի հայաստանյան ներկայացուցչություն, Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար, Հույս և Օգնություն ՀԿ, Ամբո շԿ, ԵԿՀ/ ETF (Եվրոպական կրթական հիմնադրամ):

Իրագրվում

Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի վերաբերյալ հասարակայնության տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով իրականացվել են հանրային իրագրվման աշխատանքներ, կազմակերպվել են մամուլի ասուլիսներ գործակալության ընթացիկ աշխատանքները, աշխատանքների տարեկան ամփոփ արդյունքները և միջազգային համագործակցությունը ներկայացնելու համար, հետևել են մամուլի հրապարակումներին և տվել պարզաբանումներ և հարցազրույցներ մի շարք լրատվամիջոցների աշխատաշուկայի իրավիճակի, իրականացվող ծրագրերի և զբաղվածության ոլորտի առկա խնդիրների վերաբերյալ: Կազմակերպվել են նաև կլոր սեղաններ շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

2.Կենսաթոշակային ապահովություն

Կենսաթոշակային ապահովության բնագավառը կանոնակարգելու նպատակով 2014 թվականին մշակվել են մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

ՀՀ օրենքներ.

1. <<Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 2014 թվականի հունիսի 21-ի թիվ ՀՕ-77-Ն ՀՀ օրենք:
2. <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-206-Ն ՀՀ օրենք:
3. <<Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՀՕ-207-Ն ՀՀ օրենք:
4. <<Եկամտային հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ >> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-208-Ն ՀՀ օրենք:
5. <<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՀՕ-209-Ն ՀՀ օրենք:
6. <<Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին >> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-210-Ն ՀՀ օրենք:
7. <<Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-211-Ն ՀՀ օրենք:
8. <<Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-197-Ն ՀՀ օրենք:
9. <<Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N ՀՕ-198-Ն ՀՀ օրենք:

10. <<Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 2014 թվականի դեկտեմբերի 1-ի N 20-199-Ն ՀՀ օրենք:

11. <<Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ (չրջանառվում է):

12. <<Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ (ՕԿԱԿ-ի կողմից ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով):

ՀՀ կառավարության որոշումներ

1. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 23-ի N 46-Ն որոշում:

2. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 8-ի N 490-Ն որոշում :

3. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 91-Ն որոշում:

4. <<Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշում (ընդունվել է ՀՀ կառավարության 06.03.2014թ. N 275-Ն որոշում:

5. <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու <<Հայաստանի ազգային հերոս>> Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին ամենամյա պարգևավճարի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 302-Ն որոշում:

6. <<ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 29-ի N 555-Ն որոշում :

7. << ՀՀ 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 452-Ն որոշում:

8. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի N 1024-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 8-ի N 482-Ն որոշում:

9. <<Օերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, ինչպես նաև ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անձի մահվան դեպքում թաղման նպաստը նշանակելու և վճարելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 6-ի N 635-Ն որոշում:

10. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 678-Ն որոշում:

11. <<Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների թիվ 3 և թիվ 4 ցուցակները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշում:

12. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 786-Ն որոշում:

13. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 718-Ն որոշում:

14. <<Մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված զինվորական կենսաթոշակները հաշվարկելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 815-Ն որոշում:

15. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 716-Ն որոշում:

16. <<Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու վերաբերյալ>> ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշում:

17. <<Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 890-Ն որոշում:

18. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի թիվ 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության օգոստոսի 7-ի N 802-Ն որոշում:

19. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1274-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 806-Ն որոշում:

20. <<Հայաստանի Հանրապետության <<ժողովրդական>> պատվավոր կոչման համար ամենամյա պատվովճար տալու կարգը և դրա չափը սահմանելու. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1841-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1335-Ն որոշում :

21. <<ՀՀ կառավարության 28.08.2014թ N 895-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1319-Ն որոշում:

22. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1499-Ն որոշում:

23. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծ (չրջանառվում է):

24. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1491-Ն որոշում:

Կենսաթոշակային համակարգի բարելավման ուղղությամբ 2014 թվականին նախաձեռնվել են հետևյալ միջոցառումները.

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված՝ կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նվազեցնելու ուղղությամբ շարունակական ծրագրեր իրականացնելու միջոցառումների շրջանակում 2014 թվականի հունվարի 1-ից ներդրվեց աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման նոր կարգ (բանաձև), բարձրացվեցին հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքների չափերը: Արդյունքում հնարավոր եղավ ապահովել ցածր աշխատանքային կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի առաջանցիկ աճի տեսլակ՝ համեմատաբար բարձր կենսաթոշակ ստացող անձանց կենսաթոշակի չափի նկատմամբ:

Միջոցառման շրջանակներում 2015 թվականի հունվարի 1-ից աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 16000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ: Արդյունքում՝ աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 2014 թվականի շուրջ 36000 դրամի փոխարեն 2015 թվականին կկազմի մոտ 41000 դրամ:

Պետական պաշտոն գրադեցրած անձանց վարձատրության նոր համակարգի ներդրման համատեքստում 2014 թվականի հուլիսի 1-ից նույնականացվել են առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց տրվող սոցիալական երաշխիքների պայմաններն ու կարգը, վերանայվել է կենսաթոշակի (այդ թվում՝ զինծառայողների) չափը հաշվարկելու կարգը: Արդյունքում, մասնավորապես զինվորական կենսաթոշակի միջին չափն ավելացել է շուրջ 15 տոկոսով:

Զինվորական կենսաթոշակների չափերի ավելացումն ի հաշիվ զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափի (14000 դրամից կդառնա 16000 դրամ) և զինվորական ստաժի մեկ տարվա արժեքի (1300 դրամից կդառնա 1500 դրամ) ավելացման, նախատեսվում է 2015 թվականի հուլիսի 1-ից:

Առանձին կատեգորիայի կենսաթոշակառուների (զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների) սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով 2014 թվականի օգոստոսի 1-ից 5000 դրամով ավելացվել է նրանց տրվող պարգևավճարի չափերը, ինչի արդյունքում 40-50 տոկոսով կավելանան Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող գումարները:

<<Զինծառայողների սոցիալական երաշխիքների մասին>> ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ 2015 թվականի հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված զինծառայողների ընտանիքների անդամների՝ մինչ այդ նշանակված 2 կենսաթոշակներից (կերակրողին կորցնելու դեպքում զինվորական և աշխատանքային կենսաթոշակ կամ սոցիալական նպաստ) մեկի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի փոխարեն նշանակվում է պարգևավճար: Միաժամանակ վերանայվել է զոհված զինծառայողի ընտանիքի անդամի՝ պարգևավճարի իրավունք տվող պայմանները և 2015թ. հունվարի 1-ից այս խումբ անձանց պարգևավճար է նշանակվում անկախ աշխատելու հանգամանքից:

Շարունակական բնույթ է կրել նաև կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: 2013թ.հունիսին ներդրվեց, իսկ 2014 թ. ամբողջական ծանրաբեռնվածությամբ գործեց <<Էլեկտրոնային կենսաթոշակ համակարգը>>: Արդյունքում, կենսաթոշակների վճարման ամենամսյա գործընթացն էական որակական փոփոխություն կրեց՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, միաժամանակ նպաստելով կենսաթոշակների վճարման հասցեականության բարձրացմանը: Օրենսդրության միատեսակ կիրառումն ապահովելու, ՀՀ պետական բյուջեից կատարվող վճարումների հասցեականությունը բարձրացնելու նպատակով կատարելագործվում են նաև այլ տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը:

2014թ. տրվեց մեկ տասնամյակ շարունակ մշակված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մեկնարկը: 2014 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքով վերջական լուծում տրվեց ՀՀ սահմանադրական դատարանի 2014թ. ապրիլի 2-ի N ՄՂՌ-1142 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված օրենքի առանձին դրույթների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին:

3. Սոցիալական աջակցություն

Պետական նպաստների (դրամական օգնության) բնագավառ. Պետական նպաստները 2014 թվականին նշանակվել և վճարվել են <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-231-Ն) 8-րդ հոդվածով նախատեսված սոցիալական ծառայությունների առանձին ձև: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման գործընթացն իրականացնում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները (այսուհետ՝ ՄՕՏՍ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են (այսուհետ՝ տարածքային մարմին):

Պետական նպաստների համակարգը՝ որպես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործիք, կարիք ունի վերափոխման՝ ընդհանուր աղքատության կրճատման խնդիրների լուծման և կայուն ընտանիքների ձևավորման օժանդակելու համար: Սոցիալական քաղաքականությունն ուղղվելու է սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթի կանխմանը, այդ բնակավայրերի բնակչության սոցիալական ակտիվության բարձրացմանը, որը կհանգեցնի սոցիալական անտարբերության նվազմանը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (նախկինում ընտանեկան նպաստ) ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին, ունի սոցիալական բարձր հնչեղություն:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է

տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, վարչարարության բարելավում և տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են ԱՀՌԾ և ԿԶԾ սահմանած ռազմավարական ուղղություններին, ՀՀ ԱԿԾ ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն: Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը՝ ինչքան մեծ է այդ միավորն այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված՝ հաշվարկված՝ վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները, կենսաթոշակը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդանության, կերակրողին կորցնելու դեպքում՝ նպաստները, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամյա պարգևավճարները և անանապահովությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.00» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2014 թվականը ներառյալ:

Պետական նպաստների բնագավառում ՀՀ կառավարության վարած քաղաքականության հիմնական առաջանախերթությունը, ինչպես նախորդ տարիներին, 2014 թվականին նույնպես, ընտանեկան և սոցիալական նպաստների հասցեականության մեծացումն է: Ընտանեկան և սոցիալական նպաստների համակարգի փոփոխությունները կատարվել են երկու ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություններ և վարչարարության բարելավում:

Հիմնական փոփոխությունները կատարվել են 2012 թվականին՝ ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում և եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում: 2012 թվականի հունվարից ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմում հաշվի են առնվում նաև զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնությունները, ինչպես նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստները: ՀՀ կառավարության որոշմամբ ընտանիքի անապահովության գնահատման բանաձևում եկամտի գործակցի ազդեցությունը **մեղմացվել է**, որով չեզոքացվել է ընտանիքի միջին ամսական «մեծացած եկամտի» ազդեցությունը: Այս փոփոխությունների արդյունքում ցածր աշխատավարձ ունեցող ընտանիքները նույնպես ձեռք են բերում ընտանեկան նպաստի իրավունք՝ առավելապես երեխա ունեցող ընտանիքները:

Սա համահունչ է նախորդ տարիների ընթացքում գրանցված ինֆլյացիային և աղքատության մակարդակի բարձրացմանը: Միաժամանակ միջոցառումն ունի հակակոռուպցիոն բնույթ: Հաշվի առնելով, նախորդ տարիների ընթացքում համակարգում աշխատելու փաստը կամ ստացած աշխատավարձի չափը թաքցնող անձանց առկայությունը, որոնք հայտնաբերվում էր նախարարության կողմից կատարված տարբեր տեղեկատվական բազաների համադրման միջոցով, այս քայլը հնարավորություն է տալիս ցածր աշխատավարձ ունեցող աղքատ ընտանիքներին՝ ընդգրկվել համակարգում՝ առանց դիմելու գատուղի ճանապարհների:

Պետական նպաստների նշանակման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ ավելացել են այն տվյալների քանակը, որոնք՝ որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար, ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ 2014 թվականին առցանց եղանակով տվյալներ են ստացվում ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեզիստրի տեղական ստորաբաժանումներից (բնակչության կամ ընտանիքի կազմի մասին տվյալը), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային գուտ եկամտի մասին տվյալները): Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն ՄՕՏՄ-ների կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով:

Առցանց են ստացվում նաև տվյալներ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալություններից՝ ամսական պարբերականությամբ «Նորք» ՏՎԿ ՓԲԸ-ի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ, դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՄՕՏՄ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկությունները ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքի կապակցությամբ:

Այս ուղղությամբ արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում՝ երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 1. Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2010-2014թթ.

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	17.11	14.91	15.9	16.5	17.2
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	78.77	78.94	77.69	79.78	77.71
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	13.50	11.77	12.36	13.16	13.37
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	78.28	78.07	80.69	76.97	76.27
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	31.022	35.497	37.105	37.105	37.105
Նպաստառու ընտանիքների թիվ	105005	91575	96309	102570	104130
Նպաստի միջին չափ (դրամ)	26850	26850	29350	29350	30350

2014թ.-ին նույնպես շարունակվել է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Սոցիալական նպաստի չափը 2014 թվականին սահմանվել է 16000 դրամ, որը, ինչպես նաև ընտանեկան նպաստի բազային մասը և եռամսյակային հրատապ օգնության գումարը, 2014 թվականի օգոստոսի 1-ից ավելացել է 1000 դրամով:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սահմանվել են միանվագ հրատապ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերպարողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ հրատապ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2014թ. ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ հրատապ օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4934 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10234 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 164 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՄՕՏՄ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակվել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: 2014թ. հրատապ օգնություն են ստացել միջինում 8698 ընտանիք:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

<<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքի համաձայն մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը՝ մինչև երեխայի երկու տարեկան դառնալը: Տարիներ շարունակ նպաստի այս տեսակի չափը շատ ցածր էր՝ 3000 դրամ, որը 2009 թվականի հունվարի 1-ից բարձրացվեց 6 անգամ՝ այն հավասարեցնելով 18 հազար դրամի: Նպաստի չափի այդ բարձրացմամբ է հիմնականում պայմանավորված նպաստառուների թվի զգալի աճը:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող նպաստառուների թիվը և նպաստների վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2010-2013թթ.

Տարիներ	2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.	
	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)
ընդամենը	10495	2,957	11299	2,977	11539	3,066	13312	3,072

Վերջին երեք տարիների ընթացքում այս երկու նպաստների համար նախատեսված

ֆինանսական միջոցների կտրուկ աճը պայմանավորվել է ինչպես նպաստների չափերի բարձրացմամբ, այնպես էլ նպաստառուների թվի աճով: Ընդ որում, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնողների թվի աճը կարելի է ինչ որ տեղ բացատրել նաև տնտեսական ճգնաժամով, մասնավորապես՝ կրճատումներից խուսափելու հնարավորություն է տալիս (խնամքի արձակուրդում գտնվելն առնվազն երեք տարով կրճատումից ազատում է):

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: **Ինտեգրված սոցիալական ծառայությունների** տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի ատիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար իրականացվում է իրավաստեղծ ծավալում աշխատանք, հստակեցվում են յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակվում են մեխանիզմները, դրանց նորմացույցները և այլն:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նպատակով 2012 թ.-ի հուլիսի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 952-Ն որոշումը, որով հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (այսուհետ՝ համակարգ) ներդրման ծրագիրը, նախատեսվել է ՀՀ Արարատի մարզում իրականացվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը:

Համակարգի ներդրումը ենթադրում է հանրապետությունում ձևավորել համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄՏԿ), որոնցում տեղակայվելու են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական ապահովության բաժինները, զբաղվածության տարածքային (մարզային) կենտրոնները, բժշկասոցիալական փորձաքննական հասնաժողովները, ՀՀ մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները:

2013 թ.-ին արդեն սկսել են գործել թվով 19 ՀՄՏԿ-ներ (Արարատի, Արտաշատի, Վեդու, Մապիսի, Աշոցքի, Մարալիկի, Չարենցավանի, Եղվարդի, Բաղրամյանի, Արմավիրի, Վարդենիսի, Ճամբարակի, Նոյեմբերյանի, Աջափնյակի, Նուբարաշենի, Դավթաշենի, Նորք-Մարաշի, Ավանի, Երեւունու): Նշված գործընթացը շարունակվում է նպատակով առաջիկայում ՀՀ կառավարության որոշումներով կամ համապատասխան համայնքների ղեկավարների հետ անշարժ գույքի օգտագործման անհատույց անժամկետ պայմանագրեր կնքելու միջոցով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կիսակազմվել նաև շենքեր, շինություններ՝ հանրապետության այլ տարածքներում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ տեղակայելու համար:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ուղղությամբ 2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

-ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական ակտերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը.

ՀՀ Ազգային ժողովի 2014 թ.-ի դեկտեմբերի 17-ի նիստում ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են սոցիալական ծառայությունների, սոցիալական աջակցության և ինտեգրված սոցիալական ծառայությունների հասկացությունները, հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական աջակցության իրավունքը, նպատակը, սոցիալական աջակցության կառավարման համակարգը, սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները, կարգավորվում են ՀՀ-ում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:

-համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների տեխնիկական վերազինում.

Համաշխարհային Բանկի Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՄՏԿ-ների շինվերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, շինվերանորոգման, գույքով և տեխնիկայով վերազինման աշխատանքները: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը սկսվել է Արարատի, Մապիսի, Վեդու, ՀՄՏԿ-ներում, իսկ հետագայում ծրագրին միացել են նաև այն ՀՄՏԿ-ները, որտեղ ավարտվել են վերանորոգման աշխատանքները: Գործարկվել են 19 ՀՄՏԿ-ներ: Ընթացքի մեջ են նաև ևս 14 ՀՄՏԿ-ների տեղակայման համար համապատասխան տարածքներ ամրացնելու, վարձակալելու, նախագծանախահաշվային և այլ աշխատանքները:

-համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների վերապատրաստման դասընթացների կազմակերպում.

Ծրագրի շրջանակներում 2014 թ.-ին մշակվել են համապատասխան սոցիալական աշխատողներին վերապատրաստողների վերապատրաստման համապատասխան մոդուլներ:

Զուգահեռ իրականացվել են նաև ՀՄՏԿ-ների սոցիալական աշխատողների վերապատրաստումներ:

4. Սոցիալական պաշտպանություն

Հաշմանդամներ և տարեցներ

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում 2014 թ.-ին ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

1. ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2015 թ.-ի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 40-Ն արձանագրային որոշում:

2. ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 9-ի «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշում:

3. ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 18-ի «Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2019 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը» N39 արձանագրային որոշում:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում, ելնելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. Ռազմավարության» դրույթներից, 2014 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակություն ներառելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած <<ՀՀ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին>> ՀՀ օրենքի նախագիծն այժմ գտնվում է ՀՀ Ազգային ժողովում: Օրենքը կարգավորում է հաշմանդամության սահմանման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

Գունվենցիայի դրոյթներին համապատասխան կատարվում են աստիճանական քայլեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքների լուծմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներին, գործող ծրագրերի խթանմանը, նրանց հիմնական իրավունքների լուծման նորովի մոտեցումներին:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 198619 հաշմանդամություն ունեցող անձ, որից հաշմանդամ երեխա՝ 8006: Հաշմանդամություն ունեցող անձանց 64.7 %-ը աշխատունակ տարիքի են, նրանցից զբաղված է 8-9%-ը:

2014 թ. ի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 17547 անձ, որից հաշմանդամ են ճանաչվել 15681-ը՝ 89.4 %:

Հաշմանդամ ճանաչված անձանց 4.4%-ին տրվել է հաշմանդամության 1-ին խումբ, 25.7%-ին՝ 2-րդ խումբ, 63.9%-ին՝ 3-րդ խումբ, իսկ 6%-ին՝ <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակ:

2014թ. բժշկասոցիալական փորձաքննության մարմինների կողմից փորձաքննվել է 73421 անձ, որից 2946-ը՝ մինչև 18 տարեկան: Նրանց մեջ վերափորձաքննվածների թիվը կազմում է 56293 անձ (1790-ը՝ մինչև 18 տարեկան): Վերափորձաքննվածներից հաշմանդամ են ճանաչվել 54797 անձ (93.7%):

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվել են միջոցառումներ նպատակաուղղված հանրապետությունում հաշմանդամների սոցիալական ներառման, հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հաշմանդամների համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց բժշկասոցիալական վերականգնման, կրթական ու զբաղվածության ծրագրերի իրականացման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման և այլ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:

2014 թվականի ընթացքում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնողական բուժում է ստացել 1030 անձ:

2014 թվականի ընթացքում տրամադրվել է 12615 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, որից վերին և ստորին վերջույթների պրոթեզներ՝ 956, միտայրթեզներ՝ 17 հատ, օրթեզներ՝ 384, սեղմիրան՝ 620, աղեկապ՝ 195, սուպինատոր՝ 751, ռեկլինատոր՝ 3, հենակ՝ 1151, ձեռնափայտ՝ 459, օրթոպեդիկ կոշիկ՝ 1061.5, պրոթեզի կոշիկ՝ 1831, կրծքագեղձի պրոթեզ՝ 697, գուլպաներ, ձեռնոցներ՝ 3254, սիլիկոնե գուլպա՝ 76 հատ, փոքր տրամաչափի սայլակ 8, քայլակ 223, կատարվել է պարագաների վերանորոգում՝ 592 հատ, ձայնաստեղծ սարք ստացել է 80 հաշմանդամ, 150 հաշմանդամի կատարվել է աչքի պրոթեզավորում: Տրամադրվել է 1320 լսողական սարք, որից ԱՊՀ երկրների ատաղորդության՝ 1059, եվրոպական արտադրության՝ 74՝ ձեռքբերված գնումների գործընթացով և 187-ը՝ ձեռքբերված հավաստագրերի միջոցով, լսողական սարքի ներդիրներ՝ 400 հատ (200 երեխա), հաշմանդամի սայլակ՝ 625 հատ:

Տպագրվել են բրայլյան տառատեսակով գրքեր, տետրեր, <<Բյուլետեն>> ամսագրեր, ձայնագրվել են «Խոսող գրքեր»:

Պետական աջակցություն է ցուցաբերվել <<Փրկություն>> հասարակական կազմակերպությանը, որը հաշմանդամություն ունեցող (հիմնականում մտավոր խնդիրներով) երեխաների և երիտասարդների (50 շահառու) և նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնական իրավունքների լուծման միջոցով աջակցում է նրանց ներառումը հասարակություն:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը:

Տարեցների ենթաաղյուսում <<Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ>> ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները:

Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ միջոցառման շրջանակում միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող չորս տուն-խնտերնատ՝ Երևանի թիվ 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական և Գյումրու տարեցների և հաշմանդամների տուն-խնտերնատը: Տուն-խնտերնատներում խնամվող 1090 կենսաթոշակառու գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում միջոցառման շրջանակում միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է մատուցում նախարարության համակարգում գործող <<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ միջոցառման շրջանակում Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-խնտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձ:

Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ միջոցառման շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է որոշակի բնակության վայր չունեցող անձանց ժամանակավոր կացարանի տրամադրման ծրագիր և այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից <<Հանս Քրիստիան Քոֆոեդ>> բարեգործական հիմնադրամին հատկացվում է ֆինանսական միջոցներ՝ 100 անօթևան անձի ժամանակավոր (մինչև 90 օր ժամանակով) կացարան տրամադրելու և սոցիալական տարբեր ծառայություններ մատուցելու համար:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում միջոցառման շրջանակում պետական աջակցություն է ցուցաբերվել <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 4200 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխատուցելու համար:

Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում միջոցառման շրջանակում իրականացվում է ինքնասպասարկման կարողությունները մասամբ կամ ամբողջովին կորցրած տարեցների շուրջօրյա խնամք՝ բավարարելով նրանց կենսական հիմնական պահանջումները, առաջին բուժօգնությունը, տրամադրելով առաջնային անհրաժեշտության և անձնական հիգիենայի պարագաներ:

Վանաձորի տարեցների տանը խնամվում է 55 կենսաթոշակառու, որոնց խնամքն ու սպասարկումն իրականացնում է 27 աշխատող: Տարեցների տունը հովանավորվում է Հայ օգնության ֆոնդի կողմից, սկսած 2009 թ-ից պետական աջակցություն է ցուցաբերվել «Տարեցների տուն» հիմնադրամին՝ աշխատակիցների աշխատավարձի վճարման համար: Մտացած՝ հագուստի, դեղորայքային ապահովման, կոմունալ, տրանսպորտային, վարչական և այլ ծախսերը շարունակվում է հոգալ ՀՕՖ-ը:

Երեխաների հիմնահարցերի բնագավառ

2014 թվականին ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

1. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» N 743-Ն որոշումը:
2. ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 51 արձանագրային որոշումը: Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական նպատակը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների կարիքների լիարժեք բավարարումն է, յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը:

Բարեփոխումների, ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության հիմնական գաղափարախոսությունը երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում ապահովելն է՝ մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման միջոցով:

Մանկատներում երեխաների թվի կրճատման և մուտքի կանխարգելման խնդրից ելնելով՝ հանրապետությունում շարունակվում են երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների ընդլայնումը, որոնք այլընտրանք են հանդիսանում շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններին:

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն և ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումների՝ 745 առանց ծնողական խնամքի մնացած 0-18 տարեկան երեխա խնամվում է նախարարության համակարգում գործող երեխաների շուրջօրյա խնամքի 6 հաստատությունում (այսուհետ՝ մանկատուն), որտեղ իրականացվում են նրանց շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը՝ սոցիալիզացիայի վերականգնման աշխատանքները, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սնունդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը: Վերը նշված 6 մանկատանից 3-ը՝ ընդհանուր տիպի է, 3-ը՝ մասնագիտացված, որտեղ իրականացվում են կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող շուրջ 530 երեխայի շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» N 1735-Ն որոշման, 2014 թվականին սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ 690 երեխա խնամվել է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատությունում, որտեղ երեխաների խնամքը տարանջատվում է կրթությունից և կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում՝ երեխային հասարակությանն ինտեգրելու նպատակով:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1877-Ն որոշման՝ նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգաձուռության 3 կենտրոնի կողմից ծառայություններ են տրամադրվում ռիսկի ենթակա 6-18 տարեկան շուրջ 300 երեխայի և նրանց ընտանիքներին:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության Երևանի «Զատիկ» մանկատուն պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1659-Ն որոշման, Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոնի կողմից յուրաքանչյուր տարի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան թվով 20 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք՝ մինչև նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելը, մանկատանը կամ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելը:

Շարունակվում են գործել «Հնչյալի կամուրջ» հասարակական կազմակերպության ՀՀ Տավուշի մարզի 4 ցերեկային կենտրոնները Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքներում, որտեղ ծառայություններ են մատուցվում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված շուրջ 250 երեխայի: Նշված կենտրոններն աջակցություն են ստանում ՀՀ պետական բյուջեից՝ 84 աշխատակցի տրամադրվում է աշխատավարձ:

Համաձայն 2014 թվականի դեկտեմբերի 18-ին «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական մանկատաների շրջանավարտներին ծրագիրը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 158-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1452-Ն որոշման մանկատան 17 շրջանավարտի տրամադրվել է աջակցություն: Սույն միջոցառումը 2014 թվականից իրականացվում է Վանաձոր և Գավառ քաղաքներում՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան շրջանավարտների համար: Միջոցառման նպատակն է ապահովել մանկատաների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, ստեղծել բավարար պայմաններ հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպման և նրանց հասարակությանը ինտեգրելու համար: 2014թ. շարունակվել է «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» և «Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ» հաստատությունների բեռնաթափման միջոցառումները, որոնց շրջանակներում համապատասխանաբար շուրջ 17 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում, 50 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիքներ և կանխարգելվել է 50 երեխայի մուտքը՝ հաստատություններ:

ՀՀ կառավարության N 743-Ն որոշման համաձայն 2014թ.-ից «Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ» միջոցառումն իրականացվում է նաև ՀՀ Շիրակի մարզում: «Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում» միջոցառման շրջանակում կենսաբանական 100 ընտանիքի տրամադրվել է դրամական օժանդակություն:

Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշման, մանկատաներում խնամվող 7-18 տարեկան 195 դպրոցահասակ երեխայի տրամադրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար՝ (գրպանի գումար):